

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ №2-3 (31-32) 2017 Гуманитарные науки

ՀՏԴ 93/94

ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 1926-1935ԹԹ.

Ռ.Կ.ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

*Խ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան,
0010, Երևան, Տիգրան Մեծի 17
e-mail: mirzakhanyan.ruben@aspu.am*

1926-1935թթ. պատմագրությունը Հայաստանում գտնվում էր մեթոդաբանական որոնումների փուլում: Միաժամանակ այդ ժամանակահատվածում լույս էին տեսնում աշխատություններ, որոնք ներկայացնում էին գիտական մեծ հետաքրքրություն: Դրանք ականավոր պատմաբաններ Հ. Մանանդյանի և Լեոնի աշխատություններն էին: Հ. Մանանդյանի աշխատանքները նվիրված էին հայոց հին և միջնադարյան շրջանի պատմությանը:

Հայոց քաղաքական և սոցիալ – տնտեսական կյանքի ուսումնասիրության առումով կարևոր ներդրում է արել Լեոն, ով վեր է հանել հայկական համայնքների ստեղծման սոցիալ – քաղաքական նախադրյալները: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում գիտական հրապարակումներով հանդես էին գալիս Հ. Ջորյանը, Վ. Պարսամյանը, Մ. Հասրաթյանը, Թ. Ավդալբեկյանը, Ա. Քալանթարը, Ա. Հովհաննիսյանը և այլք:

Բանալի բառեր- պատմագրություն, պատմություն, սոցիալ-քաղաքական նախադրյալներ, կովկասագիտություն, գաղափարախոսություն:

Ներկայացված է խմբագրություն 07.06.2017թ.

1926–32թթ. Խորհրդահայ պատմագրությունը չունեի հստակեցված զարգացման ուղի: Այն ձևավորման փուլում էր և չէին ավարտվել մեթոդաբանական որոնումները: Իսկ այդ մեթոդաբանությունը ձևավորվեց ավելի ուշ, թերևս 60 - ական թթ., որպես քննական – վերլուծական պատմագրություն, որը չնայած իր գաղափարախոսական միակողմանիության, չի կարելի պնդել, որ կայացած չի եղել: Թեպետ այն քաղաքականացված էր, բայց բազմաթիվ ուսումնասիրությունները իրականացնում էին գիտական պատշաճ մակարդակով, թեև հայոց պատմության շատ հիմնահարցեր նրանում սուբյեկտիվ էին վերլուծության ենթարկված:

Խորհրդահայ պատմագրության զարգացման գործում կարևոր նշանակություն է ունենում 1928թ. Երևանում մարքսիստ – պատմաբանների ընկերության ստեղծումը, որը գործել է մինչև 1931թ.: Նրա նախագահն էր Հ. Ջորյանը, փոխնախագահը՝ Ս. Մարկոսյանը, գիտնական քարտուղարը՝ Ա. Հովհաննիսյանը: Ընկերության մեջ են եղել Հ. Գյուլիքեվիսյանը, Կ. Ղազարյանը, Մ. Հասրաթյանը, Վ. Պարսամյանը, Մ. Ներսիսյանը, Ս. Պողոսյանը և ուրիշներ¹:

¹ Տես Շ. Ռ. Հարությունյան, Պատմագիտության զարգացումը Խորհրդային Հայաստանում, 1920 - 1965, էջ18:

Մեր ուսումնասիրության առարկա ժամանակահատվածում ստեղծված պատմագիտական բնույթի աշխատությունները փորձենք վերլուծելով ներկայացնել ըստ պատմության զարգացման հին, միջնադարյան, նոր և նորագույն զարգացման փուլերի:

Հայոց հին և միջնադարյան շրջանի պատմության վերաբերյալ շարունակում էր աշխատություններ ստեղծել Հ. Մանանդյանը²: Ուսումնասիրելով ասորեստանյան, հեթիթական, ուրարտական, պարսկական, հունական և հռոմեական աղբյուրները, նա ճշտել է Հին հայաստանի գլխավոր ճանապարհները, Հայաստ և Նաիրի երկրների տեղը, ասորեստանյան թագավորների, ինչպես նաև կիմերների դեպի Ուրարտու և Անդրկովկաս կատարած արշավանքների ուղիները, 10000 հույների նահանջի ճանապարհը:

Հ. Մանանդյանն գրել է նաև աշխատություն, որը մեծ նշանակություն ունի ոչ միայն հայկական, այլև՝ հունահռոմեական, բյուզանդագիտական և հին պարսկական չափագիտության ուսումնասիրության համար³:

Այսօրվա հեռավորությունից բավական գնահատելի է Հ. Մանանդյանի մեկ այլ աշխատությունը⁴: Գնահատելի է այն առումով, որ նա գտնում է, որ Հայաստանում ստրկատիրական հասարակարգ չի եղել: Ըստ նրա՝ Արշակունյաց Հայաստանում իշխել է ֆեոդալական տնտեսակարգը: Կարծում ենք, որ սա ընդունելի հայեցակարգ է:

Հայոց քաղաքական և սոցիալ – տնտեսական կյանքի ուսումնասիրության առումով կարևոր ներդրում է արել Լեոն իր մի աշխատությունում, որով ներկայացված են իր 1924 – 26թթ. կարդացած դասախոսությունները⁵ Այստեղ նա վեր է հանում հայկական համայնքների ստեղծման սոցիալ – քաղաքական նախադրյալները, ներկայացնում է հայոց ծանր դրությունը պարսկաթուրքական գերիշխանության շրջանում, ինչպես նաև նրանց նկատմամբ կիրառված հարկային քաղաքականությունը: Այստեղ է, որ նա «խոջայական կապիտալը աշխատության մեջ տալիս է հայ առևտրական կապիտալի ձևավորման և զարգացման պատմությունը, առևտրական կապերը Իտալիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի հետ և այլն:

Մյուս նշանավոր դեմքը Հակոբ Զորյանն էր, որը մի շարք ուսումնասիրություններ է գրել մարքս – լենինյան մեթոդաբանության դիրքերից⁶:

Մարքս – լենինյան մեթոդաբանության դիրքերից է փորձել շարադրել իր մի աշխատությունը Վ. Պարսամյանը⁷: Նա փորձել է լուսաբանել եկեղեցու կալվածատիրական իրավունքները և եկեղեցապատկան գյուղացիների վատթար վիճակը:

Աշխատություններ են գրվել նաև հայկական քաղաքների պատմության վերաբերյալ: Դրանցից ցանկանում ենք առանձնացնել Ե. Շահազիզի աշխատությունը⁸, որը նվիրված է Երևանի պատմությանը: Այն ավելի շատ գնահատելի է իր փաստական առատ նյութով, քան թե պատմագիտական հայեցակարգերով:

Ուրարտագիտության զարգացման մեջ մեծ ներդրում են Գ. Ղափանցյանի մի շարք աշխատությունները⁹: Դրանցում նա վերլուծում է արձանագրությունները, ցույց է տալիս ուրարտական և հայկական աշխարհագրական անունների կապը:

Խ. Սամվելյանն իր մի աշխատությունում¹⁰ անդրադարձել է հայերի ծագման հիմնահարցին, սակայն, սխալ հայեցակետային մոտեցմամբ, քանի որ փաստորեն հայերին համարում է եկվորներ, որոնք Փոքր Ասիա են գաղթել Թրակիայից՝

² Տես Հ. Մանանդյան, Հայաստանի հին ճանապարհները, ՀՍԽՍՀ գիտությունների և արվեստի ինստիտուտի «Տեղեկագիր», Երևան, 1931, N 5, Նույնի, Մանր հետազոտություններ, Երևան, 1931:

³ Հ. Մանանդյան, Կշիռներն ու չափերը հնագույն հայ աղբյուրներում, Երևան, 1930:

⁴ Я. Манандян, Заметки о феоде и феодальном войске Парфии и Аршакидской Армении, Тифлис, 1932.

⁵ Լեո, Հայոց պատմություն, նորագույն շրջան, կարդացված ՀՍԽՍՀ պետական համալսարանում 1924 – 1926 ուստարեշրջանում, Երևան, 1926:

⁶ Տես Հակոբ Զորյան, Պատմագիտական ուսումնասիրություններ, Երևան, 2015, նույնի, Հակոբ Զորյան, Պատմագիտական ուսումնասիրություններ, «Հայագիտության հարցեր», Երևան, 2015, 3(6), էջ 194 – 199:

⁷ Վ. Պարսամյան, Էջմիածինն անցյալում (պատմական ուսումնասիրության փորձ), Երևան, 1931:

⁸ Ե. Շահազիզ, Հին Երևանը, Երևան, 1931:

⁹ Տես Գ. Ղափանցյան, Ուրարտական նոր սեպագիր արձանագրությունը, «Նոր ուղի», Երևան, 1929, N 2 – 3, Նոր - Բյազետի սեպագիր արձանագրությունը, «Տեղեկագիր», Երևան, 1930, N 4:

¹⁰ Խ. Սամվելյան, Հին Հայաստանի կուլտուրան, առաջին հատոր, Երևան, 1931:

աստիճանաբար տարածվելով Տարոնում, Վանում, ապա՝ Եփրատն ի վեր և մոտավորապես 5 – ըր դարի սկզբներին տիրել են Արարատյան դաշտավայրին:

18 – ըր դարի հայ ազատագրական շարժումների գաղափարախոսությանն է անդրադարձել Թ. Ավդալբեկյանը¹¹, որը քննության է ենթարկում հայ – ռուսական դաշնագրերի երկու վավերագրերը, ցույց տալով, որ դրանք գրված են հայերի և ոչ թե ռուսների կողմից: Ավելի ուշ նա խոշոր ներդրումներ է կատարում կովկասագիտության զարգացման առումով, հրատարակելով բազում աղբյուրների Վրաստանի պատմության, ինչպես նաև հայերի մասին վրաց աղբյուրների վերաբերյալ:

Հետազոտություններ են հրատարակվում նաև հնագիտական ոլորտի վերաբերյալ: Դրանցից հիշարժան են Ա. Քալանթարի աշխատությունները, որոնց մի մասը նա հրատարակել է երեսունական թվականների սկզբին¹²:

Քալանթարը հանդիսանում է խորհրդային Հայաստանում հնագիտական աշխատանքների սկզբնավորողներից մեկը, որոնք հետագայում ավելի ընդլայնեցին:

Հայոց նոր պատմության ժամանկաշրջանին առնչվող աշխատություն է հրատարակում Լեոն¹³:

Նա անդրադարձել է 19 – ըր դարի սկզբի ռուս –պարսկական պատերազմներին, բացահայտել է այն դրդապատճառները, որոնք Ռուսաստանին ստիպում էին գրավել Անդրկովկասը, նաև հայ – ռուսական հարաբերություններին: Լեոն ճիշտ չի համարում հայերի օգնությունը ռուսական զորքերին, համարելով այդ ավելորդ նահատակություն, Ն. Աշտարակեցուն համարում է ռուսական քաղաքականության կույր գործիք, որը չենք կարծում, որ սխալ է: Նույն կարծիքն է նա հայտնում նաև Խ. Աբովյանի նկատմամբ:

Կարևոր աշխատություն է նրա «Անցյալիցը»¹⁴, ուր անդրադարձել է հայ ազգային ազատագրական պայքարին և հայ քաղաքական կուսակցությունների գործունեությանը: Չնայած որոշ ծայրահեղ մոտեցումներին, նա ճիշտ տեսակետներ է զարգացրել այդ կուսակցությունների որդեգրած ոչ արդյունավետ մարտավարության և ռազմավարության վերաբերյալ:

Բավական արժեքավոր աշխատություն է ստեղծել Բ. Բորյանը¹⁵, որի արտահայտած տեսակետները ճիշտ են ոչ միայն ռուսական արևելյան քաղաքականության բացահայտման տեսանկյունից, այլև՝ ԽՍՀՄ և միջազգային դիվանագիտության հայերի նկատմամբ որդեգրած դիվանագիտական մոտեցումների, որոնք հանգեցրին Հայաստանի բաժանմանը: Այսինքն՝ նրա աշխատությունը վերաբերում է նոր և նորագույն ժամանակներին:

19 – ըր դարի 70–80 -ական թթ. հեղափոխական խմբակների գործունեության վերաբերյալ աշխատություններ է գրել Գ.Ղարաջյանը (Ս. Տ. Արկունեդ)¹⁶: Կարևոր է նրա տեսակետը պատմությունը գրելու մասին, որի համաձայն այդ պետք է արվի ոչ թե միայն հիշողությունների հիման վրա, որոնք կարող են լինել շինծու, այլ՝ ստույգ փաստերի: Մեղադրելով անցյալի հայ պատմագրությանը, որ չի անդրադարձել հայ հեղափոխական շարժումների պատմությանը, նա ընկնում է ծայրահեղության գիրկն՝ առհասարակ ժխտելով այդ պատմագրության մեջ դրականը: Գ. Ղարաջյանը տալիս է 19 – ըր դարի 70 – 80 -ական թթ. Անդրկովկասի սոցիալ–տնտեսական կյանքի նկարագրությունը, ապա անդրադառնում է կրեռապահպանողական և լիբերալ–բուրժուական հոսանքների գաղափարական պայքարին: Արկունեդը լուսաբանում է 1882-1883թթ. Թիֆլիսում ստեղծված ազգային-դեմոկրատական խմբակի գործունեությանը: Սա այն խմբակն էր, որի

¹¹ Տես Թ. Ավդալբեկյան, Հայ ազատագրական շարժման երկու հոսանք 18 – ըր դարի վերջում, «Նորք», գիրք առաջին, Երևան, 1922, նույնի՝ Շահամիր Շահամիրյանը ու հնդկահայոց ինքնավարությունը 18 – ըր դարում, «Տեղեկագիր», Երևան, 1929, N 2:

¹² Տես Ա. Քալանթար, Քարե դարը հայաստանում, «Նորք», Երևան 1925, N 5 – 6, երկու սեպագիր արձանագրություն Ռուսա Ա - ի՝ Սարգսի որդու, Երևան, 1927, Խալդերեն մի նոր սեպագիր արձանագրություն, գտնված Ջանֆիդա գյուղում, Երևան, 1931:

¹³ Լեո, Հայոց պատմությունն նորոգույն շարժան, մասն առաջին և երկրորդ, Երևան, 1926 – 1927:

¹⁴ Լեո, Անցյալից, հուշեր,թղթեր, դատումներ, Թիֆլիս, 1925:

¹⁵ Б. Борьян, Армения, международная дипломатия и СССР, часть 1, 2, М. – Л., 1928 - 1929:

¹⁶ Գ. Ղարաջյան (Ս. Տ.Արկունեդ), Հայ անդրանիկ հեղափոխական խմբակը, Թիֆլիս, 1927, նույնի՝ За рубежом, Исторические записки, Тифлис, 1929.

քայքայմամբ Քր. Միքայելյանը տարվեց Հայկական հարցով՝ ունենալով գլխավոր դերերից մեկը ՀՅԴ ստեղծման գործում, Խ. Մալումյանը տարվեց լիբերալիզմով, իսկ ինքը Հայկական հարցը համարելով արևմտահայերի գործը՝ տրվեց հասարակական – քաղաքական այլ ուղղությունների:

Անշուշտ, նրա շատ տեսակետեր վիճելի են, բայց և գնահատելի են՝ ապաքաղաքական ձգտումներ ունենալու պատճառով:

Երկրորդ գրքույկում նա հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում հայ վտարանդի հեղափոխականների, «Հնչակի», «Արմենիայի» հիմնադրման, Դաշնակցության ծագման մասին և այլն:

Այս տեսանկյունից այն ունի նաև սկզբնաղբյուրային նշանակություն:

Իր մեկ այլ գրքույկում¹⁷ Արկունեղն անդրադարձել է Անդրկովկասի բանվորական և սոցիալ - դեմոկրատական շարժումների պատմությանը՝ սկզբից մինչև 1904թ.:

Հայաստանի բանվորական շարժումներին է վերաբերում Եր. Մելիք – Յուլյանի գիրքը¹⁸: Բայց այդ շրջանում Հայաստանում բանվորական շարժումներ շատ աննշան են եղել, եղել է ուժեղ հակացարական պայքար, ինչպես նաև կովկասյան թաթարների հետ ընդհարումներ:

Հայկական հարցի և մասնավորապես դրա նկատմամբ Ֆ. Էնգելսի հետաքրքրության մասին գրքույկով է հանդես գալիս Աշ. Յովհաննիսյանը¹⁹:

Շ. Հարությունյանն այս գրքի մասին գրում է. «Հենվելով Մարքսի և Էնգելսի՝ Արևելյան հարցի մասին հայտնած կարծիքների վրա, Աշ. Յովհաննիսյանը քննադատության է ենթարկում հայ ազգային շարժումների բուրժուանացիոնալիստական ծրագիրը, գրելով, որ հայերի ազատագրումը սուլթանիզմի լծից կարող էր իրականանալ ոչ թե ռուսական ցարիզմի՝ եվրոպական ռեակցիայի այդ պատվարի կողմից, այլ պրոլետարական ռոյուլցիայի հաղթանակի շնորհիվ»²⁰:

Նա այսպես է գրել՝ հենվելով Էնգելսի այն հայտնի տեսակետի վրա, որ Հայաստանը թուրքերից և ռուսներից կազատագրվի այն օրը, երբ կտապալվի ցարիզմը:

Հիշյալ ժամանակահատվածում բավական շատ աշխատություններ են հրատարակվել Հայաստանում սոցիալիստական կարգերի հաստատման վերաբերյալ և հատկապես մայիսյան ապստամբության²¹, որոնք պարունակում են ոչ ընդունելի պատմագիտական հայեցակարգեր և վարդապույն գույներով են ներկայացնում այդ ապստամբությունը, որը, կարծում ենք, ժամանակավրեպ էր, շտապ և ոչ լրջորեն ծրագրավորված: Հարկավ մատնանշվում են նաև սխալներ, որոնք սակայն բուն սխալները չեն: Քանի որ հիմնականում հայեցակետերը կրկնվում են, հարկ չենք համարում դրանց առանձին - առանձին անդրադառնալ:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման վերաբերյալ ոչ ընդունելի տեսակետներ է արտահայտել նաև Աշ. Յովհաննիսյանը իր մեկ այլ գրքույկում²²:

Անհնար է համաձայնվել նրա հետ, որ նույնքերին Հայաստանում հասունացել էր հեղափոխական իրադրություն, որը հանգեցրեց դաշնակցականների իշխանության տապալմանը: Չի կարելի համաձայնվել Ալեքսանդրապոլի պայմանագրին նրա տված գնահատականների հետ ևս: Նրա տեսակետների հետ ընդհանուրն առնումով լայն աղերսներ ունեն Վ. Պարսամյանի տեսակետները²³, որոնք վերաբերվում են 1918 –

¹⁷ Գ. Ղարաջյան, (Ս. Տ. Արկունեղ), Բանվորական շարժումը և սոցիալ - դեմոկրատիան Կովկասում, մաս առաջին, Երևան, 1929:

¹⁸ Եր. Մելիք – Յուլյան, Չորս տարի Հայաստանի բանվորական շարժման պատմության, 1903 – 1907, Երևան 1930:

¹⁹ Ա. Յովհաննիսյան, Էնգելսը և Հայկական հարցը, Մոսկվա, 1931:

²⁰ Շ. Ռ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 301:

²¹ Տես Շ. Ամիրխանյան, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում (1920), Մոսկվա, 1920, Ա. Կարինյան, Հայ ազգայնականների ուղին, Մոսկվա, 1926թ. Մանդալյան, Մայիսյան ապստամբությունը, Երևան, 1929, Ա. Մելիք – Շահնազարյան, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում, Երևան, 1930:

²² Ա. Յովհաննիսյան, Համազգային կրիզիցը, Երևան, 1926

²³ Պ. Պարսամյան, Նույնքերյան հեղափոխությունը Հայաստանում (1920թ. նույնքերի 29), Երևան, 1932:

1920թթ. իրադարձություններին, դաշնակցականների քաղաքականությանը, հայ – թուրքական պատերազմի պատճառներին, Մայիսյան ապստամբությանը և այլն: Սուբյեկտիվ է Դաշնակցությանը թուրքական օրիենտացիայի մեջ մեղադրելը: Գրքի վերնագիրն անգամ սխալ է, որովհետև նույնբերին Հայաստանում ոչ մի հեղափոխություն էլ չի եղել և իշխանությունը բուլշևիկներին է հանձնվել խաղաղ ձևով:

Աշխատություններ են ստեղծվել նաև Հայաստանում այսպես կոչված քաղաքացիական կռիվներին վերաբերող, որոնք նույնպես չեն բխում և չէին էլ կարող բխել ճշմարիտ պատմագիտական հայեցակետեր ստեղծելու ջանքերից: Նախ, միանգամայն սխալ ենք համարում 1921թ. փետրվարյան իրադաժություններին հաջորդող մինչև ապրիլի 2–ն ընդգրկող ժամանակահատվածը կոչել քաղաքացիական կռիվների շրջան: Աշխատությունների մեջ հիմնականում ոչ ճիշտ են ներկայացված ապստամբության բուն պատճառները²⁴:

Թերևս այս կռիվների վերաբերյալ ամենաճիշտ և ընդունելի տեսակետներն արտահայտել է Բ. Բորյանն՝ իր մեր մատնանշած աշխատությունում, ստեղծված իրավիճակի գլխավոր պատճառ համարելով հայիեղկոմի սխալ քաղաքականությունը: Եվ վերջապես կուզենայինք առանձնացնել հայ քաղաքական կուսակցությունների և մասնավորապես Դաշնակցություն կուսակցության գործունեությանն առնչվող աշխատությունները²⁵, որոնք հիմնականում կրում են քննադատական բնույթ: Դաշնակցությունը համարվում է բուրժուական կուսակցություն, որն ամենևին չէր բռնում նրա սոցիալական էության հետ: Այս առումով միակը թերևս Ա. Հովհաննիսյանն էր, որ փորձեց ցույց տալ, որ այս կուսակցությունը ավելի շուտ մանրբուրժուական էր:

Մենք առանձնացրեցինք մեր կարծիքով այն կարևոր աշխատությունները, որոնք լույս են տեսել 1926–1932թթ. և որոնցով փաստորեն հիմք էր դրվում խորհրդահայ պատմագրությանը: Դրանցից շատերը կրել են ավելի շատ քաղաքական – քարոզչական բնույթ, քան թե պատմագիտական: Բայց դա էլ պետք է օրինաչափ համարել, որովհետև խորհրդահայ պատմագրությունն անում էր իր ձևավորման առաջին քայլերը: Ինչպես մշակույթի և գիտության այլ ոլորտներ, այնպես էլ այս ոլորտը նույնպես մեթոդաբանական ուղղության որոնումների մեջ էր, բայց քանի որ պատմությունը քաղաքական գիտություն է, ապա այն ներկայացնող աշխատությունների մեջ կոմունիստական գաղափարախոսական դրույթների բաժնեչափն ավելի լայն տեղ էր զբաղեցնում: Ավելացնենք նաև, որ ներառյալ 1932թ.- նն ստեղծված աշխատությունները ներկայացնելով, ամենևին հակված չենք այն տպավորությունն ստեղծելու, որ այդ թվականով վերջանում է պատմագիտական մտքի զարգացման մի փուլ կամ այն խորհրդահայ պատմագրության պարբերացման մեջ մի փուլի ավարտն է: Պարզապես մեր աշխատության այս հատորն ավարտում ենք այս թվականով, քանի որ այդ շրջանից արդեն մի հիմնական կազմակերպության մեջ են ընդգրկվում մշակութային տարբեր ընկերություններն ու կազմակերպությունները: Ահա այս պատճառով ներկայացրեցինք մինչև այդ թվականն ստեղծված պատմագիտական կամ պատմաքաղաքական բնույթի աշխատությունները:

²⁴ Տես Ա. Բաղդասարյան, Քաղաքացիական պատերազմը Հայաստանում, Երևան, 1931, Օ. Վարդանյան, Քաղաքացիական պատերազմը Հայաստանում, Երևան, 1931, Օգանեզով, Կարմիր արշավանք, Երևան, 1930, Նույնի՝ Նժդեհի հրոսակախմբի ոչնչացումը, Երևան, 1931:

²⁵ Ա. Հովհաննիսյան, Դաշնակցության սոցիալական ծագումը, Երևան, 1927, նույնի՝ Դաշնակցության առիթով, Մոսկվա, 1927, Ա. Կարինյան, Դաշնակցությունը փաստերի դեմ, Թիֆլիս, 1926, նույնի՝ Հայ ազգայնականների ուղին, Մոսկվա, 1926, նույնի՝ Նացիոնալիզմի նոր դիրքերը, Մոսկվա, 1929, Գ. Չուբարյան, Դաշնակցական տաճկական օրիենտացիան և «Հայրենիքի փրկության կոմիտեն», Երևան, 1929, Ա. Խանոյան, Դաշնակցության տրագի – կոմեդիան, Երևան, 1930, Ե. Չուբար, Դաշնակցությունը երրորդ շրջանում, Երևան, 1930, Գ. Աբով, Դաշնակցությունն անցյալում և այժմ, Երևան, 1929 և այլն:

РЕЗЮМЕ
ИСТОРИОГРАФИЯ В АРМЕНИИ /1926-1935гг./
Р.К. МИРЗАХАНИЯН

В 1926-1935 годах историография в Армении находилась в стадии методологических исканий. Однако в этот период были изданы труды, представляющие большой научный интерес. Это прежде всего работы выдающихся историков А.Манандяна и Лео. Работы Манандяна были посвящены древнейшему периоду и истории средних веков. Лео освещал социально-политические предпосылки создания армянских общин. В изучаемый период с научными публикациями выступили А.Зорьян, В.Парсамян, Г.Гапанцян, Х.Самулян, Т.Авдалбекян, А.Калантар, Г.Гараджян, (С.Т.Аркомед), А.Ованесян и др. Несмотря на определенную политическую ограниченность некоторых изданий, 1926-1935гг. были важным этапом в развитии армянской историографии новейшего периода.

SUMMARY
HISTORIOGRAPHY IN ARMENIA FROM 1926 TO 1935
R.K. MIRZAKHANYAN

In the period between 1926 and 1935, the historiography in Armenia was still in the phase of outlining the respective methodological framework. However, in that period researches of significant scientific interest were published. Among those researches there were the studies by the outstanding historians A. Manandian and Leo. The papers by Manandian referred to the ancient and medieval periods of Armenian History. Leo's researches dwelled primarily on the socio-political premises of the creation of Armenian communities. In the subject-matter period A. Zorian, V. Parsamian, G. Ghapantsian, Kh. Samulian, T. Avdalbekian, A. Kalantar, G. Gharajian (S. T. Arkomed), A. Hovhannisian, etc. published their scientific researches. In spite of certain political restrictions tangible in some publications, the period between 1926 and 1935 was of particular importance for the development of contemporary Armenian historiography.